

besser passen als nichtidg. Etymologien, die bei Adjarian II 843 ff. verzeichnet stehen. Es sind folgende Wörter: gr. *ἔρας γῆς* Hes., *ἔραζε* „zu Boden“, got. *airpa*, ahd. *erda* „Erde“, mir. *ert* „Erde, Grund“; im Gegensatz zu diesen t-Bildungen sind mit u-Suffix versehen: ahd. *ero* „Erde“, kymr. *erw* „Feld“, abret. *eru* „Furche“. Mit diesen u-Bildungen des Germ. und Kelt. wollte Pedersen a. O. *erkir* zunächst verbinden. Wir werden, nicht so bestimmt, immerhin auf die Verwandten im Gr. Germ. Kelt. hinweisen müssen¹⁶.

36a. *ընդերք անդերկ, անդերս* pl. tant. „Eingeweide“. Hübschmann AG I 447; Walde-Pokorny I 126; Hofmann Gr. etym. Wb. p. 84. Dieses Wort vergleicht sich mit ai. *antrá-, āntrá-* „Eingeweide“, gr. *ἔντερα* „Gedärme, Eingeweide“, ksl. *jetro* „Leber“, *qtroba* „Eingeweide“, aisl. *idrar* „Eingeweide“. Innerhalb dieser ai.-gr.-aisl.-slav. Verwandtschaftsbeziehungen ist zweifellos die arm.-gr. Ähnlichkeit am größten. Es ist jedoch kein Grund vorhanden, das arm. Wort als Lehnwort aus dem Griechischen aufzufassen; cf. Adjarian II 1041. Alle diese Wörter sind nichts anderes als Ableitungen von einem idg. **entero-* „innerer“.

36 b) *ընթաց անտաչ* „Weg, Gang“, *անտանալ* „laufen, gehen“. Hübschmann AG vacat; Walde-Pokorny II 496; Walde-Hofmann II 516; Adjarian II 1044ff.; VII 130; Feist³ p. 424; Ernout-Meillet³ p. 1085. Man verknüpft diese armen. Wörter mit der Sippe von avest. *hant-* „gelangen, gelangen lassen“, air. *set* „Weg“, kymr. *hynt* „Weg“, got. *sinþs* „Gang, Mal“, ahd. *sind* „Gang, Weg, Reise, Fahrt“, got. *ga-sinþa* „Reisegefährte“, ahd. *gi-sindi* „Reisegefolge, kriegerisches Gefolge“, got. *sandjan*, ahd. *senten* „senden“. Hierher gehören aber auch die Wörter des geistigen Bereichs wie ahd. *sinnan* „trachten, begehren (neben: „reisen, gehen, wandern“), ahd. *sin*, gen. *sinnes*

¹⁶ Ganz anders als die bisherigen Versuche der Wortklärung ist der Einfall von Meillet, *Mélanges Boisacq I (1937) p. 1f.*, der hier wie in *ekin* „Himmel“ einen Reflex von **ayou-* „zwei“ (arm. *երկու*) sehen will; Himmel und Erde sind die zwei Hälften einer Schale oder eines Welt-eies nach alter idg. Kosmologie, cf. ved. *ubhav ardhau* „die beiden Hälften“. Weitergeführt ist der Gedanke bei Pisani, *Uxor, Ricerche di morfologia indoeuropea, Milano 1951, p. 5f.*: n/r als masc./fem. Formans.

„Sinn“, lat. *sentio, sentire* „fühlen, empfinden“, *sensus* „Gefühl, Sinn“. Diese beiden Bedeutungsfelder („Reise, Weg“ einerseits und „sinnliche Wahrnehmung, Erkenntnis“ andererseits) lassen sich wohl leicht miteinander in Verbindung bringen, wenn wir an die Sprache der Jäger denken; cf. dt. *Spur* und davon abgeleitet *spüren*. „Cheminer, c'est alors se remplir l'esprit d'observations et de réflexions“ sagt J. Vendryes in seinem interessanten Aufsätze „La langue des chasseurs“ in *Archivum Linguisticum I p. 28*. Die Übertragung auf die geistige Sphäre ist eine Gemeinsamkeit von Latein, Germ. und bis zu einem gewissen Grade auch Keltisch.

Das Armenische zeigt nur die konkrete Bedeutung des Avest., Germ. und Balt. (lit. *siunciù, siusti* „senden“). Das Armen. unterscheidet sich aber in formaler Hinsicht von allen diesen Sprachen, da es nur eine Grundform **senth-* mit Tenuis aspirata fortsetzen kann. Ein **sent-* hätte nur **and-* ergeben können. Nur mit dieser Modifikation ist die Etymologie von Scheffelowitz BB 29, p. 57, dem wir die obige Zusammenstellung verdanken, zu halten. Darum hat sich Adjarian erst in den Nachträgen zur Anerkennung dieser Etymologie entschlossen.

Wir werden dieses Wort also buchen als Zeugnis für die selbständige Stellung des Armenischen bei iran.-balt.-germ. Anklängen.

37. *թակն տակն, տակն* „Knüttel“, *տակալ* „Holzinstrument, um die Leute zur Kirche zu rufen“, *տակալ* „verprügeln“, *տակալ*, *տակալ* „Kapitell“. Hübschmann AG vacat; Lidén IF 18 (1905—1906) 498f.; Walde-Pokorny II 622; Adjarian II 1092. Lidén will darin eine ziemlich genaue Entsprechung zu lat. *tignum* „Balken, Bauholz“ sehen. Die gemeinsame Grundform für beide Wörter könnte man als **teg-no* ansetzen. Etwas ferner stehen die mit s- anlautenden germ. Belege (aisl. *stjaki* „Pfahl, Stange“, ahd. *steccho* „Stecken“ u. a. m.) sowie lit. *stāgaras* „dürre, langer Stengel“ und russ. dial. *stožarb* „Stengel“. Es handelt sich hier um eine arm.-lat.-germ.-balt.-slav. Verwandtschaft, wobei diese zwischen Arm. und Lat. am größten ist und andererseits die nordidg. Sprachen eine engere Gruppe für sich bilden.

ՊԵՏՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄՇԸԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն:)

3. Ս. ԽԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1852)

Սերամիէ թաղի «Ս. Խաչի Ընկերութիւն»ը հիմնուած է 1852ին: Առաջին յիշատակութիւնը գտած ենք Նայեան Աղաւնիի քով¹⁰: Մասիսի¹¹ մէջ կ'ըսուի որ Իւսկիւտարի դպրոցի «Ս. Խաչի Ընկերութեան Վարչութիւնը դպրոցի յառաջդիմութեան համար կարեւոր միջոցները սկզբնառելէ՝ վերջ՝ ձեռք կը զարնէ ուրիշ միջոցի մ'ալ, այն է՝ վիճակահանութեան: Ընկերութիւնը կը հանէ 4000 տոմսակ, իւրաքանչիւրը 25 դուրուշն: Գումարը կ'ըլլայ 100,000 դրշ.: Շահող տոմսակները 4 հատ պիտի ըլլան. 25,000, 12,000, 7,500 եւ 5000 դրշ., դումար՝ 50,000: Իւր տոմսակները ծախուելէ վերջ՝ 50,000 յուրուշի վիճակահանութիւն պիտի ըլլայ, յուրուշի վիճակահանութիւն պիտի ըլլայ, իսկ միւս 50,000 դուրուշը պիտի մնայ Ընկերութեան¹²: Արդիւնքը անձանօթ է մեզ: Ընկերութեան տարեկան բաժանորդագինն էր 250, 125 եւ 62½ դուրուշ:

4. ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԵՂՈՒԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1854)

Ընկերութեանս հիմնադրութեան մասին կը գրէ Սրժուի Վասպուրական, որ Պոլիս կը տպուէր տակաւին. «Իւսկիւտարու Ս. Խաչ Եկեղեցւոյ ուսումնասէր ժողովուրդը իբր մէկ տարի յառաջ՝ Ընկերութիւն մը հաստատեան Մեղուաց Ընկերութիւն»¹³: Ընկերութեան նպատակն եղած է Ս. Խաչի թաղային վարժարանին նպաստել¹⁴:

Սկիւտարի Ս. Խաչի վարժարանին 10 տարիէ ի վեր ըրած յառաջդիմութիւնը շեշտելի վերջ՝ կը գրէ հայ թերթ մը. «Բայց ժամանակէ մը ի վեր իրենց գովելի ջանքը կրկնապատկեցին՝ Նոր Ընկերութիւն մը հաստատելով Արարատեան Մեղուաց անուամբ, որուն Նախագահ եղած է Մեծ. Փիշմիշեան Նշան աղայն¹⁵»:

Ընկերութեան 1856 Յունուար 22ին Յարկոր Պատրիարքին գրած մէկ նամակին վրայ

¹⁰ 1852, թ. 43:
¹¹ 1853, թ. 52:
¹² Տես Նաեւ Նայեան Աղաւնի, 1853, թ. 44:
¹³ Արժուի Վասպուրական, Կ. Պ. 1855, թ. 4, էջ 53:
¹⁴ Անոյ, էջ 57:
¹⁵ Մասիս, 1855, թ. 191, Սեպտ.:

կը տեսնուի Ընկերութեան ինքնայատուկ կնիքը:

Ինչպէս կը տեղեկացնէ Արամ Անտոնեան¹⁶, կնիքը բնական մեծութեամբ է. արտաքին երկու օղակները սեւ յատակով. դրերը եւ աստղերը սպիտակ. մէջտեղի շրջանակը սպիտակ յատակ ունի եւ միայն ժ տառը սեւ է:

«Ժ» տառը՝ Արարատեան մեղուներու աշխատանքի ժրուքիւնը կը խորհրդանշէ:

5. ԲԱԺԱՆՈՐԳԱՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1858)

Սերամիէի Բաժանորդական Ընկերութիւնը հիմնուած է 1858 Նոյ. 23ին: Ունի կանոնագիր մը, որ 20 Յօդուածներէ կազմուած է եւ հետեւեալ տեղեկութիւնները կու տայ Ընկերութեան մասին.

Յօդ. Ա. Այս Ընկերութեան նպատակն է քանի որ մանչ ու քանի որ հինգ աղջիկ, Լուսաւորչեան հայ, վկայեալ աղքատ տղաք արիւսակէս դաստիարակել, մասնաւոր գիշերօթիկ դպրոց հաստատելով, երկու սեռին համար:

Յօդ. Բ. Ընկերութիւնը այս նպատակին հասնելու համար բաժանորդութեամբ ստակ պիտի ժողովէ միջեւ հինգ տարի եւ հետո՞ւ զհետէ ժողովուած ստակը շահեցնելով, ըստ եօթներորդ յօդուածին, երբոր եկամուտը դպրոցին հաստատութեանը ու ծախուցը բուժելու ըլլայ, այն տան միայն դպրոցը պիտի բանայ:

Յօդ. Ե. Մէկ բաժինը տարին հինգ դուրուշ է:

Յօդ. Զ. Ընկերութիւնը հետզհետէ ժողովուած ստակով շահուած կարուածներ պիտի դնէ, այսինքն՝ հող, քարուկեր եւ փայտէ շէնքեր, որոնց եկամուտը նորէն հաւաքուած ստակին հետ մէկտեղ բերելով, վերստին կարուած գնելու պիտի յատկացնէ:

Յօդ. Թ. Ընկերութիւնը քանի որ կը բաղկանայ այս քիւր ո՛չ կ'աւելնայ, ո՛չ կը պակսի:

Յօդ. Ժ. Ընկերութիւնը կնիք մը ունի երեք կտորէ բաղկացած, որոնցմէ մէկը պիտի մնայ նախագահին քով, երկրորդը գանձապետաց, երրորդը Ընկերութեան խորհրդական անդամներուն քով¹⁷:

¹⁶ Թորոսեան, Երև. Ձէլէպ., Գ., էջ 274:
¹⁷ Մասիս, 1859, թ. 396:

Ընկերութեան հիմնադիր 20 անձերն են .

- Գրիգոր Օտեան Նախագահ
- Յովհաննէս Մարգարեան Փոխ-Նախագահ
- Գարեգին Փափազեան Ա. Ատենադպիր
- Եղիազար Ս. Հ. Չայեան Բ. Ատենադպիր
- Նշան Օտեան Գանձապետ
- Յարութիւն Մարուխանեան Գանձապետ
- Մեսրոպ Այվատեան Գանձապետ
- Թէոփիլէ Մաղաքեան Գործակալ
- Մկրտիչ Աղաթօն
- Կարապետ Աճէմեան
- Տիգրան Եուսուֆեան
- Օքսենտիոս Շահանեան
- Եղիազար Ա. Չայեան
- Թովմաս Չայեան
- Յակոբ Պէլլէրեան
- Գրիգոր Պէօրէքեան
- Արրահամ Սաքայեան
- Գէորգ Սթիմարաճեան
- Յովհաննէս Վարդանեան
- Տիգրան Փեշտիմարճեան¹⁸

Մեղու¹⁹ կը գրէ. «Այս Ընկերութիւնը Ազգային Գերազոյն ժողովին գիտութեամբն ու հաւանութեամբը իր գործը սկսած օրէն, իսկոյն ամէն իմաստուն եւ ազգասէր անձանց համակրութիւնը վայելեց եւ մինչեւ անգամ բարձրագատիւ Մ. Լօռու Մեխիֆեան զօրապետը իր գործակցութիւնը նուիրեց այս բարեկատու գործին՝ Ռուսոյ Հայոց բաժանորդագրութեան աշխատութիւնը իր վրայ առնելով ու մեծ յոյս եւ քաջակրօնութիւն տալով Ընկերութեան: Արդէն քանի քանի անձինք երեւան ելան, իրենց հարստութենէն մաս մը կտակ ընելու այս Ընկերութեան»:

Մեմուայը Հավատիսի խմբագիր եւ Հայ Կաթողիկէ Հասարակութեան աշխատող ղեկավարէն մին՝ Յովսէփ Վարդանեան (Վարդան Փաշա) գովելով Ընկերութեանն ազգասիրական ծրագիրը՝ կը շեշտէ. «... անանկ եղանակ մը մտածեր են որ յիշուի Ազգին մանկուոյն իսկական ու մշտնջենաւոր կրթութիւն ու դաստիարակութիւն կը խոստանան: Այս եղանակն է Ազգը Ազգով կրթել²⁰»:

Գէորգ Պատրիարք մասնաւոր Կոնդակով մը կը հրաւիրէ ժողովուրդը՝ ձեռնտու ըլլալ Ընկերութեան. ամէն մէկ թաղէ քահանայ

մը կը նշանակէ՝ հանդանակութիւն ընելու համար²¹. Թաղերու մէջ հանգանակութիւն ընելու համար աշխարհականներ ալ նշանակուած էին²²:

Ընկերութեանս մասին յաջորդ 6—7 տարիներէն տեղեկութիւն չենք գտած: 1866 Օգոստոսին Փնջիկ կը գրէ. «Քանի՛ քանի՛ անգամ հրապարակաւ ակնարկութիւններ եղան Բարեգործական եւ Բաժանորդական Ընկերութեանց համար, բայց ո՛չ երբեք պարտաւատչաճ ուշադրութիւն մը տեսնուեցաւ: Այս Ընկերութեանց նպատակները երբ ծանուցան, ո՞վ ստակ տուաւ. չէ՞ որ ժողովուրդը բացաւ իւր քսակը եւ չզլացաւ ինչ որ կրնար եւ թերեւս ինչ որ չէր կրնար... Ո՞րք են Բարեգործական ու Բաժանորդական Ընկերութեանց հաւաքած ստակները. ազգին ո՞ր գործին համար կը ծառայեն, որո՞նց ձեռքն է, ո՞րչափ է, պէտք չէ՞ որ այս ամէնը ազգը...: Բայց, ինչ որ ալ ըլլայ, գետնէ մեք եւ շատերն ալ գիտեն հիմա թէ այս Ընկերութիւնները խափանուած են²³»:

Ինչպէս կը տեսնուի՝ Ընկերութիւնը իր նպատակը չէ գործադրած տակաւին 1866ին եւ խափանուած է: Զբոսուիլ թէ կազմալուծուած կամ փայփայուած է, այլ՝ հաւանօրէն արգելի դրուած է:

Այոյոյաճեան²⁴ կը գրէ որ «1866ին Բերայի մէջ կը բացուի Հայկազեան վարժարան մը գիշերօթիկ, հաւանօրէն այս Ընկերութեան ջանքերով, սակայն նոյն իսկ տարին չի կրնար բոլորել»:

Ըստ մեզ հաւանական չէ որ Ընկերութիւնը 1866ին գիշերօթիկ վարժարան մը բացած ըլլայ, երբ այդ տարին խափանուած էր, կ'ըսուի, եւ հայ ժամանակակից թերթերը չէին կրնար չգիտնալ բացուած ըլլալը, երբ նկատի ունենանք թէ թերթերը կը հետապնդէին Ընկերութեան շարժումները: Մեր կարծիքը հաստատելու համար ունինք աւելի շօշափելի ապացոյց մը:

1874ին Մամուլ հրապարակաւ հաշիւ պահանջելով Ընկերութենէն՝ կը գրէ. «1860էն ի վեր, որ Ընկերութեան ԽԱՓԱՆՄԱՆ ԹՈՒԱԿԱՆՆ է, ցարդ Բաժանորդական Ընկերութիւնն իր հաշիւներն ինքնին չներկայացոյց ազգային Վարչութեան»:

¹⁸ Մեղու, Կ. Պ. 1858, էջ 130:
¹⁹ Անդ, էջ 123:
²⁰ Մեխիֆ. Հավատիս, 1859, Թ. 303: — Հմմտ. Մեղու, 1859, էջ 145—146:

²¹ Գաղ. Տարեգ., Բ., էջ 88:
²² Մեղու, 1858, էջ 131:
²³ Փունջ Օրաթերք, 1866, Թ. 7:
²⁴ Գաղ. Տարեգիրք, Բ., էջ 80:

Ուրեմն՝ 1860ին, Ընկերութեան հիմնարկութենէն երկու տարի ետքն արդէն, Ընկերութիւնը խափանուած եւ անգործութեան դատապարտուած էր: Անշուշտ Պետութենէն: Հետեւաբար չէր կրնար Ընկերութիւնը 1866ին գիշերօթիկ վարժարան բանալ:

Մամուլի հաշուով Բաժանորդական Ընկերութիւնը իր գանձումներով զոյացուցած ըլլալու էր անուագին 130·000 դրուոյ²⁵:

Թէ ինչու թուրք պետութիւնը կը փակէր Ընկերութիւնս՝ կը բացատրէ Օրագիր թերթը²⁶ 1874ին, գրելով. «Ազգին գրեթէ սահմանադրական շարժմանց միջոցին էր որ մեր մէջ լուսաւորեալ ու հմտութեամբ առաջին կարգի համարուած ամէն անհատն իր մէջ պարունակող Բաժանորդական Ընկերութիւն մը կազմուեցաւ... ՆՊԱՏԱԿԸ պիտի ըլլար ԲԱՐՈՅԱՊԷՍ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ, իսկ ճիւղապետ երկրագործութիւն»:

6. ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1862)
 Հիմնուած է 1862 Մայիս-Յունիսին: 1862 Յունիսին Ընկերութեան հիմնադրութեան հանդէս տեղի կ'ունենայ Սիւլտանի Զամլընա ըսուած վայրը²⁷:

Կիլիկիա²⁸ կը գրէ. «Իւսկիւտարի Ալլամիթի թաղին Ուսումնասիրաց անուն պատուարժան Ընկերութիւնը հազար դրուոյ յանձնել է ազգային վարչութեան ի նպաստ հրկիզեալ ազգայնոց Պրուսայի»:

Ընկերութիւնս անձանօթ է Թորգոմեանի եւ Այոյոյաճեանի:

7. ՀԱՅԿԱԶԵԱՆ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1862—1863)

Կազմուած կ'երևայ 1862ի վերջերը կամ 1863ի սկիզբը: 1863 Նոյեմբերին հայ թերթ մը կը պատմէ. «Իւսկիւտարի Սելամիթ թաղին Հայկազեան Առեւտրական Ընկերութիւնը, ըստ տրամադրութեան իւր հիմնական կառուցած մինչեւ հիմա ունեցած շահուն համոզման տասը՝ 1000 դրուոյ յիշեալ թաղին ազատացն ու դպրատանցը բաժին հանեց քանի մը շարաթ յառաջ: Ասկէց զատ Ս. Խաչի տունին ալ 600 դրուոյ հացագին բաշխած է թաղին կարօտելոց²⁹»:

²⁵ Մամուլ, 1874, էջ 731:
²⁶ Օրագիր, 1874, Թ. 1389:
²⁷ Մեղու, 1862, էջ 143:
²⁸ 1863, էջ 470:
²⁹ Կիլիկիա, 1863, էջ 520:

Անձանօթ է Այոյոյաճեանի: Թորգոմեան³⁰ յիշած է «Առեւտրական» ձեւով:

8. ... ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1864)
 «Սկսեալ Բանասէր»³¹ իւսկիւտարի մէջ 1864ին հիմնուած Ընկերութիւն մը կը յիշէ, որուն անունը չի տար: 1864ին հիմնուած որեւէ Ընկերութիւն չենք գտած Սիւլտանի երեք թաղերու մէջ:

9. ԽՆԱՄԱԿԱԼ ՏԵԿՆԱՆՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1866)
 Հիմնուած է 1866 Ապրիլին վերջերս, ինչպէս «Խնամակալ Տիկնանց» 1867ին կազմած Տեղեկագիրը կը յայտնէ³²:

Խնամակալ Տիկնանց Ընկերութեան նպատակն է Ս. Խաչ թաղի ազգական վարժարանին նպաստել՝ հսկելով ազգական կրթութեան եւ ուսման, օրինակ առնելով Օրթաքիւղի եւ Խապիւղի Հայ Տիկնանց բարի ընթացքը՝ ազգական դաստիարակութեան տարելու գործին մէջ³³:

Սելամիթ թաղի թաղական Խորհուրդը գոհ մնալով Խնամակալ Տիկնանց գործունէութենէն՝ 1867ին Ս. Խաչի ազգական վարժարանի Տեսչութիւնը Խնամակալ Տիկնանց կը յանձնէ, որոնք կարեւոր փոփոխութիւններ ու յաւելումներ կ'ընեն ազգական ուսման ծրագրին մէջ³⁴:

Խնամակալ Տիկնանց օգտաշատ գործը գրեւատելով վեր կը հանեն նաեւ Մասիս³⁵ եւ Փունջ³⁶:

Խնամակալ Տիկնանց դաստիարակչական այս կարեւոր ձեռնարկին ոյժ տալու համար 1868ին կը կազմուի «Արարատեան Ընկերութիւն»³⁷:

Ընկերութիւնը տեւած է մինչեւ 1872: 1873ին Սելամիթի թաղեկեք յիշելով Խնամակալ Տիկնանց Ընկերութեան ա՛յնքան շինիչ գործունէութիւնը՝ փափագ կը յայտնեն գարձեալ կազմելու նոյնպիսի Ընկերութիւն մը³⁸:

Ընկերութիւնս անձանօթ մնացած է Այոյոյաճեանի:

³⁰ Երեմ. 24, էջ 141:
³¹ Արեւիկ, 1898, Թ. 3854:
³² Տես Ժամանակ, 1867, էջ 132:
³³ Անդ:
³⁴ Անդ, էջ 46 եւ 132:
³⁵ 1867, Թ. 809:
³⁶ 1870, Թ. 522:
³⁷ Մասիս, 1868, Թ. 867:
³⁸ Փունջ, 1873, Թ. 845:

10. ԹԱՏԵՐԱՊԱՇՏՊԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1866—1867)
Ծիածան³⁹ թատերական ներկայացումի մը առթիւ Իւսկիւտարի մէջ կազմուած «Թատերապաշտպան Ընկերութիւն» մը կը յիշէ, առանց անդրադոյն լուսարանութեան⁴⁰: «Թատերական Ընկերութիւն»ը կը յիշէ նաև Մանգ. ԷՓ. (1870, Թ. 1377):

Ընկերութեանս անունը անձանօթ է Ալպոյաճեանի:

11. ԸՆԹԵՐՅԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1868)

Կազմուած է 1868ին⁴¹: Ունեցած է իր Կանոնագիրը⁴², մեզի անձանօթ: 1871ին բացած է Լսարան⁴³. ճառախօսութիւնները տեղի կ'ունենային սրճարանի մը սրահին մէջ. կը խօսէր Սիմէոն Ֆէլիկեան⁴⁴:

Ընկերութիւնը Պետրոս Դուրեանի թաղման նիւթական հոգն ստանձնած եւ արժանաւոր թաղում մը կատարել տուած է⁴⁵: Նոյնպէս ինքն է որ ձեռնարկած է, 1872ի գարնան, տպագրել Պետրոս Դուրեանի «Տաղք եւ թատերգութիւնք»ը: Սակայն տպագրիչ Յանձնախումբը սխալ կ'ընէ Դուրեանի գրութեանց բնագրի վրայ սրբագրութիւն կատարելով, որուն դէմ կը բողոքէ նամակով մը Դուրեանի եղբայրը՝ Յարութիւն եւ կը պահանջէ որ կա՛մ սրբագրուած կտորները կրկին տպուին բնագրին համեմատ եւ կա՛մ ամբողջ բնագիրը իրեն ետ դարձուի՝ անտիպ⁴⁶: Հակառակ այդ բողոքին՝ տպագրութիւնը գլուխ կ'ելլէ 1872ին:

Ընկերութիւնը ունեցած է Ընթերցարան մը՝ Սելամիէի մեծ պողոտային վրայ⁴⁷ եւ բաւական գիրք⁴⁸:

Արդէն 1872ի վերջերը նշաններ կային կազմալուծուելու⁴⁹, բայց մինչեւ 1874 կը պահէ իր գոյութիւնը եւ կը քայքայուի: 1874 Փետր. 8 թուականով «Ազգ»ի մը մէջ Ընկերութեան Տնօրէն Խորհրդոյ Գործադրիչ Գօսան կը ծանուցանէ⁵⁰. «Իւսկիւտարու Ըն-

թերցասիրաց Ընկերութիւնը Մեծ. Ընկերաց խորին անտարբերութեան շնորհիւ ցրուեալ վիճակի մը ենթակայ եղած ըլլալով՝ Տնօրէն Խորհուրդը պարտ անձին համարեց, ըստ Կանոնագրութեան, Ընկերութեան գոյքը ազգային հաստատութեան մը նուիրել»: Ընկերութեան պարտքերը վճարելու համար մաս մը գրքեր ծախելէ վերջ՝ կարասիները սրճարան մը աւանդ կը թողու եւ մնացած 93 կտոր գրքերը Ազգ. Հիւանդանոցի կը նուիրէ:

12. ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1868)

Սելամիէ թաղին «Խնամակալ Տիկնանց Ընկերութիւնը» իր մէկ տարուան գործունէութեամբ աղջկանց վարժարանի մէջ չափազանց դո՛ւ թողուցած էր թաղեցիները եւ հրժարած աղջկանց հոգէն: Թաղեցիները այդ հրժարականին վրայ մեծ ցաւ գգալով՝ «Փութացեր Ընկերութիւն մը կազմեր են, որպէս զի Խնամակալութեան քէ՛նքնապէս եւ քէ՛ բարոյապէս ձեռնուռ ըլլալով՝ իր յառաջդիմական ազնիւ պաշտօնը շարունակելու հաճեցնեն»⁵¹:

Ընկերութիւնը կը կոչուի Արարատեան Ընկերութիւն, որ անմիջապէս 80 հոգի անդամ կ'արձանագրէ. յանձն կ'առնէ ամսէ ամիս «Խնամակալ Տիկնանց» 1000 դուրուշ յանձնել՝ վարժարանի ծախքերուն համար⁵²:

Ընկերութեան Հիմնադիր եւ Գործադիր Ժողովի անդամներն են.

- Քրիստոստուր Ղազարոսեան
- Յակոբ Եմէնիճեան
- Պօղոս Վ. Պ.
- Յարութիւն Խանտանեան
- Յովհաննէս Խանճեան
- Արրահամ Յ. Այվազեան
- Միհրան Ե. Թուղլաճեան⁵³:

Կու տանք նաև եօթը Յօդուածէ բաղկացած Ընկերութեան կանոնագիրը.

«Յօդ. Ա. Ընկերութեան նպատակն է Ս. Խաչի աղջկանց վարժարանի ներկայ Խնամակալութեան առ այժմ նիւթապէս օգնել եւ եթէ Խնամակալութիւնը հարկ համարի, բարոյապէս ալ օժանդակել:

51 Փոքր Մասիս, 1868, Թ. 224, Սեպտեմբեր: — Հմմտ. Մամուլ, 1869, էջ 74 եւ 107:
52 Մասիս, անդ, Թ. 239:
53 Անդ, Թ. 246:

Յօդ. Բ. Ընկերութիւնը եօթն անգամէ բաղկացեալ Գործադիր Ժողով մը պիտի ունենայ, որք Ընկերութեան Հիմնադիրներն են:

Յօդ. Գ. Ընկերութեան Գործ. անդամները մինչեւ տարի մը իրենց յանձն տուած պաշտօնը պիտի շարունակեն:

Յօդ. Դ. Տարի մ'ետեւ Ընկերութիւնը Նոր Տնօրէն Ժողով մը կ'ընտրէ իր ընթացքը շարունակելու համար:

Յօդ. Ե. Գործ. Ժողովը բաժանորդութիւն մը պիտի բանայ, բաժինը 50 դուրուշ տարին, կամ ամիսը 4 դուրուշ: Ուշուրը կէս բաժին ալ կրնայ գրուել, ինչպէս նաև ամէն բաժանորդ շատ բաժիններ ալ կրնայ առնուլ:

Յօդ. Զ. Գործ. Ժողովը գոյացած բաժանորդագիրները Խնամակալութեան պիտի յանձնէ եւ իրեն քով 1000 դուրուշն աւելի գումար մը չպիտի պահէ:

Յօդ. Է. Գործ. Ժողովը իր ընթացից վերաբերեալ գործերը պիտի տնօրինէ եւ ասոր համար հարկ եղած Կանոնները պիտի հաստատէ⁵⁴:

Ընկերութիւնը 1869ին դեռ կը շարունակէր իր յանձնառութիւնը⁵⁵:

Ընկերութիւնս անձանօթ է Ալպոյաճեանի:

13. ԴԱՏԻԱՐԱՎԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1871)

Ընկերութեանս Հիմնադրութեան մասին առաջին տեղեկութիւնը Հայրենիքի քով գտած ենք, որ 1871 Յուլիս 17ին կը գրէ. «Ուրախութեամբ կը ծանուցանեմք թէ Դատարարակաց Ընկերութիւն անուն բարենպասակ Ընկերութիւն մը հաստատուած է մայրաքաղաքս, ուսումնական ձեռնհաս ազգայիններէ, որ ամէն քաղ երկուս վարժարաններ պիտի բանան որեւէ ազդեցութենէ ու թաղային իրաւասութենէ անկախ, շահն ու փաստը իրենց ըլլալով, ամէն տեսակ գիտութիւն, ուսմունք ու լեզուազիտութիւն պիտի աւանդուին»⁵⁶:

Ընկերութեան Ատենապետ Աւետիս Տէր Սահակեան եւ Ատենադպիր Ս. Հ. Մ. Ֆէլիկեան մասնաւոր «Ազգ»ի մը մէջ 1871 Յուլիս 20ին կ'իմացնեն թէ իրենց առաջին վարժարանը բացած են 1871 Յուլ. 18ին Իւսկիւտարի Սելամսրգ թաղ, Սելամիէի փողոց

54 Մասիս, 1868, Թ. 869:
55 Փուլնց, 1869, Թ. 308:
56 Հայրենիք, 1871, Թ. 56:

Թիւ 19 եւ կու տան վարժարանի դասանիւթերու ցանկը⁵⁷:

Ընկերութիւնը հարկ եղած պատրաստութիւնը տակաւին չունենալով՝ սկիզբը միայն մանչեր կ'ընդունի, բայց արդէն երկու ամիս վերջ Ընկերութիւնը կը ծանուցանէ թէ աղջիկներու համար զատ բաժին եւ տեղ պատրաստած ըլլալով՝ կ'ընդունի նաև աղջիկներ⁵⁸:

Ընկերութիւնը իր ծանուցումը իւսկիւտարի Սելամսրգ (Սելամիէ) թաղէն կու տայ եւ իր վարժարանը կ'անուանէ — Դատարարակաց Ա. վարժարան⁵⁹:

Յաջորդ տարիներու մէջ Ընկերութեանս մասին յիշատակութիւն չ'ըլլար: Անձանօթ է Ալպոյաճեանի:

14. ԱՂՔԱՏԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1872)

Սելամիէ թաղին մէջ 1872ի սկիզբը Հիմնուած է «Աղքատասիրաց Ընկերութիւն» մը, որ շատ կարճ տեւողութիւն մ'ունեցած է. գուցէ Յունուարէն մինչեւ Մարտ:

Փուլնց 1872 Ապրիլին խօսելով Սկիւտարի Ենիմահալլէի «Աղքատասիրաց Ընկերութեան» վրայ՝ կը գրէ. «Անցեալները Սելամիէի քաղին մէջ ալ աղքատաց օգնելու նպատակաւ Ընկերութիւն մի երեւան ելաւ. եւ արդարեւ բաւական օգնութիւն ու միտքաբարութիւն մատոյց կարօտեց. սակայն շուտով խափանեցաւ, մինչդեռ կը լսէինք թէ մշտնջենաւոր պիտի լինի եւ միանգամայն ջանաց անշարժ եկամուտներ ալ հայքայքել... չեմք կրնար այս առթիւ չմեղադրել գանձի իրենց սկսածն ի գլուխ շտանելուն համար»⁶⁰:

Հմայեակ քահ. Էքսէրճեան⁶¹ Սելամիէ թաղին մէջ «Աղքատասիրաց Ընկերութեան» 1873 Փետր. 27ի յետեւալ հաշիւը տեսնելով՝ կը գործնայ եւ կը հարցնէ թէ արդեօք գոյութիւն ունեցա՞ծ է 1873էն առաջ «Աղքատասիրաց Ընկերութիւն» մը Սելամիէի մէջ, թէ «բարեմիտ եւ պարզամիտ գանձապետը իր գրացումներուն թելադրութեամբ նոր անուն մը շինեք ու արձանագրեք է»:

57 Մասիս, 1871, Թ. 1115:
58 Անդ, Թ. 1140:
59 Անդ:
60 Փուլնց, 1872, Թ. 719, Ապրիլ 22:
61 Յիշատակարան Յիւնամեայ Յորեիանի երէց թաղից Աղքատասիրաց Հոգաբարձութեան Սկիւտարու, Կ. Պ. 1930, էջ 42:

39 1867, Թ. 46:
40 Հմմտ. Մասիս, 1867, Թ. 814:
41 Արեւիկ, 1898, Թ. 3853:
42 Մասիս, 1872, Թ. 1281:
43 Անդ, 1871, Թ. 1159:
44 Անդ, 1871, Թ. 1347:
45 Փուլնց, 1872, Թ. 707:
46 Տե՛ս Յարութիւն Դուրեանի նամակը՝ Արեւիկ, 1892, Թ. 2667:
47 Թորոզման, Երեւ. Չէլէպ., Գ., էջ 141:
48 Մասիս, 1874, Թ. 1497:
49 Օրագիր, 1872, Թ. 831:
50 Մասիս, 1874, Թ. 1497:

